



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
Էլ.փոստ /E-mail/ ձև.почта: e.pirumyan@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 10) 58 54 19
☎ (374 10) 54 08 57

№ 5/22.4/53238

<<26>> 11 2012 թ

Դրանի վրա չեմք ընդհանուր և մասնավոր շահերի, միայն շահերի և վնասների հարաբերակցությունը: Քննարկում ենք: Քննարկում ենք: Կարգելի:

29.11.12

<<Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն պարոն Ա.Բլեյանին

Հարգելի պարոն Բլեյան

<< բնապահպանության նախարարությունը ողջունում է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կողմից սովորողների մեջ հայրենի բնության ճանաչողությանն ու բնության նկատմամբ սեր և հոգատարություն սերմանելուն նպատակաուղղված նախաձեռնությունը:

Ընդհանուր առմամբ հավանություն տալով Ձեր 07.11.2012թ N 12-11-355 գրությամբ ներկայացված <<Հայաստանի արգելոցներ և ազգային պարկեր>> և ամենամյա 3-րդ էկոտուր ծրագրերի նախագծերին, միաժամանակ հայտնում եմ հետևյալը.

1. Ծրագրում անհրաժեշտ է բնության հատուկ պահպանվող տարածքների և դենդրոպարկերի անվանումները խմբագրել՝ ստորև նշված ձևակերպումներին համապատասխան.

- «Ջրվեժ» անտառպարկ,
- Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ,
- Իջևանի «Իջևան» դենդրոպարկ,
- «Դիլիջան» ազգային պարկ,
- «Որդան կարմիր» պետական արգելավայր,
- «Թոչկան» ջրվեժ» բնության հուշարձան,
- «Սևան» ազգային պարկ,
- «Շիկահող» պետական արգելոց,
- «Արփի լիճ» ազգային պարկ,
- Վանաձորի «Սարուխանյան Ժ. անվան» դենդրոպարկ:



2. Ծրագրի նախագծի 3-րդ պարբերությունը ձևակերպել հետևյալ կերպ.

<<Յուրաքանչյուր այցելության ժամանակ աշակերտները, տվյալ բնության հատուկ պահպանվող տարածքի ռեժիմին համապատասխան, կկազմակերպեն ուսումնական պլեներներ, կկատարեն ճանաչողական, բնապահպանական, տարածքի մաքրման, ուսումնական և ստեղծագործական աշխատանքներ: Դենդրոպարկերում և անտառապարկում աշխատակիցների հետ (նրանց ղեկավարությամբ և առաջարկությամբ) իրականացվող աշխատանքներ.>> մնացածն՝ ինչպես տեքստում:

3. <<Ժամանակացույցի>> համապատասխան տողերի 4-րդ սյունակում կատարել հետևյալ լրացումները՝

- <<Խոսքովի>> պետական արգելոցում՝ <<Կենսաբազմազանության ուսումնասիրություն>>,

- <<Արփի լիճ>> ազգային պարկում՝ <<Բարձր լեռնային/տափաստանային գոտու կենսաբազմազանության և էկոհամակարգերի ուսումնասիրություն>>,

- Եղեգիսի կիրճում՝ <<Կենսաբազմազանության ուսումնասիրություն>>,

- <<Դիլիջան>> ազգային պարկում՝ <<Անտառային կենսաբազմազանության, էկոհամակարգերի և... >> մնացածն՝ ինչպես տեքստում,

- Իջևանի <<Իջևան>> դենդրոպարկում՝ <<Արժեքավոր և հազվագյուտ, ծառաթփային բույսերի կենդանի հավաքածուների ուսումնասիրություն>>,

- <<Որդան կարմիր>> պետական արգելավայրում՝ <<Որդան կարմիր էնդեմ միջատի և նրա բնակմիջավայրի ուսումնասիրություն>>,

- <<Շիկահող>> պետական արգելոցում՝ <<Պահպանվող անտառային էկոհամակարգի ուսումնասիրություն>>:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ <<Խոսքովի անտառ>>, <<Շիկահող>> և <<Էրեբունի>> պետական արգելոցների տարածքներ մուտք գործելու համար նախապես անհրաժեշտ է դիմել << բնապահպանության նախարարին:

Հարգանքով՝



Է. Փիրումյան